ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/25

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Սարգսյանի (լիազորագիր, տրված՝ 04.02.2019թ.)

Քննելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար պետական պատվերով ստենտավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 21.02.2019թ. ներկայացված և 22.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/25 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Հերմո Ֆարմ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 21.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ):

«ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը հրապարակվել է 14.01.2019թ.:

Հետադարձ աճուրդը կայացել է 24.01.2019թ.:

24.01.2019թ. մինչ սույն բողոքը ներկայացնելու օրը Պատվիրատուի կողմից արձանագրությունը հասանելի չի դարձվել (հրապարակվել) ցանկացած անձի համար, ինչպես սահմանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք):

05.02.207թ. դիմում է ներկայացվել Պավիրատուին օրենքով սահմանված կարգով Աճուրդի արձանագրության և դրա մաս կազմող փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին:

Բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ Պատվիրատուն չի տրամադրել պահանջվող փաստաթղթերը կամ մերժել ներկայացված դիմումը (դրսևորել է անգործություն):

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 9-րդ հոդվածի 4-րդ մասը:

Համաձայն Աճուրդի հրավերի 7.9 կետի՝ դիմում-հայտարարությունների գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված

մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև տասներկու, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տասնյոթ աշխատանքային օրվա ընթացքում:

24.01.2019թ. տեղի է ունեցել «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով հետադարձ աճուրդը և մինչ սույն բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ Պատվիրատուն չի հրապարակել Աճուրդի արձանագրությունը:

05.02.2019թ. դիմում է ներկայացվել Պատվիրատուին օրենքով սահմանված կարգով Աճուրդի արձանագրության և դրա մաս կազմող փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին:

Պատվիրատուն չի տրամադրել կամ մերժել պահանջվող փաստաթղթերի պատճենները:

Այսպիսով Պատվիրատուի կողմից չի պահպանվել հայտերի գնահատման և արձանագրության հրապարակման համար սահմանված ժամկետները և ընթացակարգը:

Հրավերի 11-րդ գլուխը կարգավորում է գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը:

Համաձայն հրավերի 11.3 կետի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Թեև սույն բողոքի առարկան Պատվիրատուի գործողություններն (անգործություն) են, այնուամենայնիվ Ընկերությունը հարկ է համարում անդրադառնալ հրավերին, մասնավորապես տեխնիկական բնութագրերին, փաստարկելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից Աճուրդն իրականացվել է օրենքի կոպտագույն խախտումներով և դեռևս դրանք շարունակվում են:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը:

Ուսումնասիրելով Աճուրդի հրավերը, Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն տեխնիկական բնութագիրը կազմելիս չի առաջնորդվել Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի իմպերատիվ պահանջով, քանի որ դրանում բացակայում է «կամ համարժեք» եզրույթը: Պատվիրատուի կողմից Օրենքով չառաջնորդվելու արդյուքնում խախտվել է ինչպես այլ հայտատուների, այդ թվում «Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ի՝ Աճուրդին մասնակցելու իրավունքը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետը սահմանում է, որ Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Օրենքով սահմանված կարգավորմամբ չկազմված հրավերով կայացված էլեկտրոնային աճուրդը չի կարող ապահովել օրինական արդյունք, քանի որ ի սկզբանե կարծես թե Պատվիրատուն միտում է ունեցել քողարկված միջոցով սահմանափակել շատ այլ մասնակիցների հայտ ներկայացնելու հնարավորությունը, այդպիսով՝ հնարավորություն ստեղծել նախընտրելի մասնակցի հաղթանակը:

Պատվիրատուի նմանօրինակ միտումը հիմնավորում է նրանով, որ մինչ այժմ Պատվիրատուն չի հրապարակել 24.01.2019թ. հետադարձ աճուրդի արձանագրությունը և այն Ընկերության դիմում-պահանջի հիման վրա ևս չի տրամադրվել:

Այդպիսով՝ Ընկերությունը արձանագրում է Պատվիրատուի բազմաթիվ օրենսդրորեն կարգավորումների շրջանցումները, որը չի դիտարկվել ուղղակի վրիպումներ կամ անհետևողական վերաբերմունքը: Նման վերաբերմունքը պետական միջոցներից ֆինանսավորվող գործընթացին շատ ավելի ռիսկային նախադրյալներ են պարունակում:

Իրավական նորմերի խախտմամբ իրականացվող գնման ընթացակարգը չի կարող ապահովել օրինական եզրափակում, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրանց իրականացման համար ընդունված իրավական այլ ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):

«Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.02.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.02.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

2. Աճուրդի հրավերի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվում է 24.01.2019թ. ժամը 09:15-ին:

3. www.gnumner.am տեղեկագրում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրությունը հրապարակված չէ տեղեկագրում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 21.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 13-րդ կետի համաձայն՝ աճուրդն սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ ***աճուրդն ամփոփվում է հրավերում նշված կոնկրետ ժամը լրանալու դրությամբ կամ սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում:***

Կարգի 19-րդ կետի համաձայն՝ ***աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝***

1) գնահատող հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցով ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի արդյունքում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գինը.

2) գնահատող հանձնաժողովի քարտուղարն աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրության, ինչպես նաև տվյալ նիստին ներկա հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում.

3) գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված ***երեք աշխատանքային օրվա ընթացքում*** համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

5) սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 22-24-րդ կետերի համաձայն՝

22. Սույն կարգի 19-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով նիստը հրավիրվում է ***ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:*** Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

23. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

24. Արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի հրավերի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվում է ***24.01.2019թ. ժամը 09:15-ին:***

Աճուրդի հրավերի համաձայն՝ Աճուրդը բաղկացած է 36 չափաբաժիններից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ www.gnumner.am տեղեկագրում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրությունը հրապարակված չէ տեղեկագրում:

Արձանագրում եմ նաև, որ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերից բացի, որևէ այլ փաստաթուղթ կազմված Աճուրդի շրջանակներում՝ այդ թվում Աճուրդի հետագա ընթացքը բնութագրող, www.gnumner.am կայքում հրապարակված չէ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Գնման գործընթացը՝ հատկապես գնման գործընթացի կազմակերպումը և պայմանագրի կնքումը ենթադրում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան գործողությունների ամբողջություն, որոնց համար սահմանված են հստակ ժամկետներ:

Ընդ որում՝ համապատասխան գնման գործընթացի կազմակերպման ամբողջ գործընթացի համար ժամկետային սահմանափակումներ նախատեսելն աննպատակ չէ և ուղղված է գնման գործընթացի չհիմնավորված ձգձգումներից, կամայականություններից խուսափելուն և գնման գործընթացն արդյունավետ և ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում այն կազմակերպվում է պետության կարիքների համար, որոնք անհետաձգելի բնույթ են կրում:

Ուսումնասիրելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար պետական պատվերով ստենտավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի իրականացման ընթացքն, արձանագրում եմ, որ վերջինիս շրջանակներում թույլ են տրվել մի շարք ընթացակարգային նորմերի խախտումներ: Մասնավորապես՝ էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը սահմանող ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշումը հստակ կարգավորում է աճուրդի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Մասնավորապես Կարգը սահմանում է, որ աճուրդն ամփոփվում է հրավերում նշված կոնկրետ ժամը լրանալու դրությամբ կամ սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում, իսկ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրության, ինչպես նաև տվյալ նիստին ներկա հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:

Դրա հետ մեկտեղ Կարգը նախատեսում է նաև այն գործողությունները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից ենթակա են կատարման աճուրդն ամփոփվելուց հետո և կրկին սահմանված են հստակ ժամկետներ, որոնք վերաբերում են թե մասնակիցների հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրելուն և թե ընտրված մասնակից ճանաչելուն, իսկ այնուհետև նաև Օրենքով նախատեսված պայմանագրի կնքման անգործության ժամկետ սահմանելուն:

Ընդ որում՝ Օրենքի իմպերատիվ պահանջ է հանդիսանում գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրվող նիստերի արդյունքներով արձանագրությունների կազմումը և տեղեկագրում հրապարակումը:

Արձանագրում եմ, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար պետական պատվերով ստենտավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում www.gnumner.am տեղեկագրում 25.01.2019 թվականից մինչ օրս

հրապարակված չէ գնահատող հանձնաժողովի որոշումների վերաբերյալ որևէ տեղեկատվություն, այդ թվում նաև՝ հրապարակման ենթակա այլ տեղեկատվություն:

Նման պայմաններում գտնում եմ, որ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում խախտվել են նաև հայտերի գնահատման, աճուրդի արդյունքների ամփոփման (այդ թվում՝ պայմանագիր կնքելու որոշման հրապարակման) գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետները:

Նման պայմաններում գտնում եմ, որ Աճուրդն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգի կոպիտ խախտումներով, ուստի Աճուրդը պետք է հայտարարվի չկայացած:

Ինչ վերաբերում է «Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից բողոքով Աճուրդի տեխնիկական բնութագրի վիճարկմանը, ապա Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի, ինչպես նաև e-auction համակարգում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 22.01.2019թ. ժամը 09:15 ներառյալ: Հետևաբար սույն բասով բողոքը չի կարող քննության առարկա դարձվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին Աճուրդը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ